

# ԲԱՐՆՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՎ ԻՊՏՍՑԻՈՑ



Գիտական ժողովրդեան բնաւորական յատկութեանց և ոչ մին՝ իւր բարեպաշտութեան նման որոշակի աչքի կը դարնէ։ Արդէն Հերոդոտալ կը պատմէ՝ եգիպտացիք բարեպաշտութեամբ կը գերազանցեն քան զայլ ամենայն ժողովուրդս։ կրօնքն էր շարժառիթ իրենց գործոց։ Եւ այս բանս ևս տառաւել յայտնի կը լինի ամենուն, եթէ կարդանք զեռ ևս պահուած յիշատակարանքը և արձանագիրքը, որոց բազմաթիւ բնագիրք անմիջական յարաբերութեան մէջ են կրօնից հետ։ Եւ այս բարեպաշտութիւնս այնչափ կ'առաւելու՝ որ նոյն իսկ բժշկական երկատիրութիւնք, ինչպէս Պապիրոս Էպէրսի, և այնպիսի մատեանք ևս՝ յորս գեղեցկանալու միջոցներ, և այլն, կը տրուին, պէտք են համարուիլ իբրև առանձին կրօնական մատեանք։ նոյնպէս նաև բժշկական խրատք ալ ստորակարգեալ են կրօնական պատուիրանաց և սովորութեանց։ Սակայն եթէ զայս ալ չբիտենք, Նեղոսի օրհանց վրայ գտնուած տաճարաց աւերակներէն ուրիշ հետեւանք չենք կրնար հանել, բայց եթէ առնոց հիմնադրաց բարեպաշտութիւնը։ Այս անհամար հոյակապ և հիասքանչ տաճարներն և մանաւանդ հրաշակերտն կառնաքի, « մեծագոյն և գեղեցկագոյն՝ աշխարհիս բոլոր շինուածոց մէջ, յորս մարդն աստուածութեան բնակութիւն մի կը պատրաստէ »։ Հնագոյն քաղաքակիրթ ժողովրդեան բարեպաշտութեան և առ աստուածութիւնն ունեցած յարգանաց վրայ կը խօսին այն բարձր գաղափարքն, զորս այս օգոյն ունէր առնա՝ Եւ ոչ որ առարկէ ըսելով՝ թէ այս տաճարներն ըստ մեծի մասին արքայական հիմնադրաց փառաւորութեան և մեծութեան յայտարարք կը համարուին։ Վառն զի ով որ այս շինութիւնս կը դիտէ, կ'ըսէ Պրուկզ գեղե-

ցիկ և պատշաճ եղանակաւ, կը զգայ անմիջապէս թէ ինչպիսի բարձր գաղափարով աստուածային էութեան՝ լցեալ հին ճարտարապետք՝ այս վայրերն տաճար շինեցին, և ոչ իշխանին մեծութեան, այլ աստուածութեան համեմատ, որ առաջնոյն զօրութեան միջոց տուած է։ « փարաւն կանգնեց այսչէն, քերն, կը կարգանք կառնաքի տաճարին արձանագրոյն վրայ, իւր Ամինն — Ուհորն, Երկնից իշխանին համար... Երկնից հաստատութեան պէս հոյակապ է տաճարն, և յաւիտենական տնոգութեան համար շինուած է »։

Եւ ինչպէս չէնք, նոյնպէս նաև տաճարաց ներքին գեղեցկութիւնն Եգիպտացոց կրօնական զգացմունքը կը ցուցնեն մեզ։ Պաղոմեանց ժամանակն իսկ դիտենք այս ժողովրդեան զարմանաց արժանի ջանքը և մեծագոյն փափաքն տաճարաց պատերը՝ մինչև ամենափոքր անկիւնքն իսկ՝ զարդարուն պատկերօք և գրութեամբք գեղեցկացրնելու։ Յիւրաքի կարելի է որ փարաւնաց ունայնատիրութիւնն առիթ եղած լինի թէ այս գեղեցկութեանց և թէ շինուածոց առ հասարակ, բայց որովհետև իրենք անձնական պատիւներն կը փնտռեն ի պատիւ աստուածութեան շինուածոց մէջ, այս բանս կ'ապացուցանէ այսու առնայնիւ թէ ժողովրդեան և թէ իրենց կրօնական զգացմունքն։ Ուղուրթագէն Ա փարաւնին սկզբունքն էր. « Միայն ի պատիւ աստուածութեան շինուածք՝ թագաւորի մը յիշատակը պիտի պահեն »։ Իսկ մեծն Թուգմէս Գ. բոլորովին առոր հակառակ այսպիսի տաճարաշինութեանց համար երկրաւոր վարձուց չյուսալով, Աստուած՝ որոյ գեղեցիկ տաճար չինեց ի թիւրէ և այս հոյակապ յիշատակիս համար զոր ի պատիւ իրեն կանգնեց, ի յերկինս իր քովը իրեն անարատ կեանք մը պիտի տայ »։ Երե-

ւելի փարաւոնիս այս բարեպաշտ իոր-  
հուրդն յայտնի կը լինէր նաև այնու՝ որ  
յետ իր ( մեզ ) ծանօթ փառաւոր յազ-  
թութեանց, անմիջապէս « իւր շնորհա-  
կայութիւնն կ'ընէր աստուածութեան,  
և ամէն բանէ առաջ զՎմանն — Ռա կը  
լիչէր, որ ( Թուրմէս ) յԱբէ ( Թեբէ )  
եղած տաճարը իւր պատերազմին աւա-  
րաց ընծաներով ճոխացուց » : Եղիպ-  
տացւոյ բովանդակ կեանքն և վարք  
կրօնական օժում մ'ունին, զոր և տա-  
րեկան օտնից թիւն կը հաստատէ, յո-  
րում կը դտնենք Նոր տարւոյ, հինգ  
աւելեաց օրերուն տօնը, ամսական և  
տասուերկու կիսամեանց, Նեզոսի ողոր-  
ման, Սոթիսի համարձման, Աւաղոյ,  
Լեբան և Դաշտաց, և Տարւոյն վերջին  
տօներն : Ուխտագնացութեանց սովո-  
րութիւնն կանուխ ժամանակէ կը տես-  
նենք : Հրէից պէս Եղիպտացիք ալ պըտ-  
լոց երախայրիքը 'ի տաճարն՝ աստուա-  
ծութեան կ'ընծայէին . կարեոր գոր-  
ծէ մ'առաջ կ'աղօթէին, և նոյնպէս ոչ  
որ կարմիր ծովէն դէպ 'ի Նեղոս ճամ-  
բորդութիւն կը սկսէր, մինչև որ աղօ-  
թիւք Քոփիթոյի աստուածութեան չը-  
յանձնէր իրեղիները . և երբայցի Բով-  
սեպոս պատմչին ըսածին համեմատ՝  
Եղիպտացիք սովորութիւն ալ ունէին  
միշտ աղօթելու ճաշելէ առաջ, Ընծայելք  
և աղօթիւք զմեռեալս կը պատուէին, և  
մեռելոց այս պաշտօնն թէ հին էր և  
թէ եռանդեամբ կը պահէին : « Իսկ  
կենդանի մնացողն, կ'ըսէ Սթիւդոս,  
պէտք է հանդստեան տեղերն այցելու-  
թեան երես և մեռելոց զոհին աղօթքն  
կատարէ » : Իրենց կրօնական զգաց-  
մանց մեծ նշան է և այն՝ որ Ռայի՝ դե-  
րագոյնն աստուծոյ նշանն՝ միշտ բանից  
սկիզբն կը գրուէր : Կրնայ արդեօք ան-  
կեղծ և խորին բարեպաշտութիւն մի  
առաւել պարզ և սքանչելի կերպով  
տեսնուիլ, քան թէ հետեւեալ յիշուած  
պաղատանաց մէջ, զոր Պինդարոս  
բանաստեղծն Ռամնէս Բ. թագաւորին  
բերանը կը գնէ, երբ նա 'ի պատերազ-  
մի իրեննիկէն լքեալ՝ 'ի թշնամեաց պա-

շարուած էր . « Ռ'ըր հոս, հայր իմ Սմ-  
մոն . կրնայ արդեօք հայրն մոռնալ իւր  
որդին : Ռ'հ, ոչ որ է՝ որ լսէ ինձ . . . եւ  
բիւր զանցառու չեղայ պատուիրանացդ . .  
և ով որ կը հնազանդի քեզ՝ սէտք է  
որ բարեացդ ալ հաղորդ լինի : . . . Մե-  
լիոն անձերէ աւելի վեր ես դու ինձ  
համար . . . մարդկան գործողութիւն ու  
չինչ է . . . դու աւելի ես քան զանոնք .  
զքեզ կը կոչեմ » : Եւ բարեպաշտ ձայն  
կ'ենէն ամենահին գերեզմանաց վրայ  
կրկնուող մշտակաց ձեռնք մէջ . « Ով  
քահանայք, եթէ կը սիրէք յաւիտե-  
նական կեանքն և կ'անարգէք զմահ,  
ձեր փառքն ձեր որդւոց մէջ փնտռե-  
ցէք, որով աստուածոց շնորհակալու-  
եղած կը դտնուիք » :

Այս կրօնական զգացմունքն եղիպ-  
տական պատմութեան մինչև վերջին  
ժամանակներն ալ պահուեցաւ . և այդ  
կրօնասիրութիւնն է որ կը խօսի որոշա-  
կի Սահհու քրմին տապանադրին վրայ,  
որոյ ատեն Եղիպտոս Պարսից օտար  
իշխանութեան տակ կը հառաչէր .  
« Ո՛ր տէր, քու ծառադ էի, որ քու կա-  
մացդ համեմատ կը դրօժէի . . . . . դու  
բիւր բարութիւն ըրիր ինձ . . . : Որով-  
հետեւ քեզ հնազանդ էի՝ ուստի գլխուս  
փուս մ'ալ չհասուցին . . . : Դու առիւր  
ինձ երկար կեանք և սրտի խաղաղու-  
թիւն . . . հիմա քու որդիդ 'ի թագաւո-  
րութիւն երկնից մտաւ զԱստուած տես-  
նելու համար, որ 'ի բարձունս է » : Այս  
պիսի խօսքերով կը յայտնէ այն ամէն  
բան զոր կրօնք կրնայ տալ սրտի . —  
շնորհակալութիւն առ Աստուած, իմա-  
ցողութիւն, զպարտս կատարած լինելու  
խաղաղութիւն, վստահութիւն և ա-  
պաւինութիւն առ Աստուած 'ի մահուն :  
Եւ յետ այսպիսի վկայութեանց յիրաւի  
չենք կրնար տարակուսիլ թէ հին Ե-  
ղիպտացւոց, ինչպէս նաև հիմակուան  
իրենց սերունդոց ներքին զգացմունքն  
կը համապատասխանէր իրենց արտա-  
քին կրօնական վաստակոց և դործաւ  
նութեանց :